ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 03/20

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՖՈՆԴԻ ԵՎ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՍԵՓԱԿԱՆԱՇՆՈՐՀՄԱՆ, ԲՆԱԿԿԱՐԻՔԱՎՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

ք. Բյուրեղավան 24 փետրվարի 2020 թ.

**Նիստին մասնակցում էին՝** Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 08-ի N44-Ա որոշմամբ ստեղծված համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովը հետևյալ կազմով՝

**Միշա Եղիազարյան** - համայնքի ղեկավարի տեղակալ

**Հանձնաժողովի անդամներ՝**

**Արգամ Շաոյան**- «Բյուրեղավան» համատիրության նախագահ,

**Վոլոդյա Հայրապետյան**- համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ,

**Աննա Սահրատյան**- համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ:

**Նիստի օրակարգի հարցը**

Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 1-ին հանրակացարանի 59 և 60 սենյակների (ներկայիս՝ 49 շենք 54 բնակարան) բնակիչ Ստասիկ Սարգսի Սիմոնյանի դիմումի վերաբերյալ:

**Զեկուցող՝** հանձնաժողովի նախագահ Միշա Եղիազարյան:

Միշա Եղիազարյանը ներկայացրեց, որ 2-րդ փողոցի 1-ին հանրակացարանի 59 և 60 սենյակների (ներկայիս՝ 49 շենք 54 բնակարան) հասցեի բնակիչ Ստասիկ Սարգսի Սիմոնյանը դիմում է ներկայացրել Բյուրեղավանի համայնքապետարան Բյուրեղավան համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 11-ի «Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի N54 բնակարանն անհատույց Ստասիկ Սիմոնյանի ընտանիքին օտարելու մասին» N78-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու խնդրանքով:

**Լսեցին՝** հանձնաժողովի անդամ Վոլոդյա Հայրապետյանին:

Նա ներկայացրեց, որ Ստասիկ Սարգսի Սիմոնյանի 2020 թվականի փետրվարի 19–ի դիմումը (Դ-326/20) վերանայվել է և պարզվել, որ Բյուրեղավան համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 11-ի N78-Ա որոշման և Բյուրեղավան համայնքի 2-րդ փողոցի 49 շենքի 54 բնարանի սեփականության վկայականում կա մակերեսի չափերի անհամապատասխանություն (ավագանու որոշման մեջ գրված է 27.69քմ, իսկ վկայականում՝ 31.86քմ), ինչպես նաև դիմումատուն ներկայացրել է հայտարարություն՝ ընտանիքի անդամների ստորագրությամբ, որ սեփականատեր ճանաչեն միայն իրեն:

**Հանձնաժողովը առաջարկեց**՝ Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 1-ին հանրակացարանի 59 և 60 սենյակների (ներկայիս՝ 49 շենք 54 բնակարան) բնակիչ Ստասիկ Սարգսի Սիմոնյանի դիմումի համաձայն և հիմք ընդունելով ավագանու որոշման ու վկայականում առկա տարբերությունները՝ Բյուրեղավան համայնքի ավագանու 2014 թվականի հունիսի 11-ի «Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի N54 բնակարանն անհատույց Ստասիկ Սարգսի Սիմոնյանի ընտանիքին օտարելու մասին» N78-Ա ավագանու որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին նախագիծը համայնքի ավագանու հաստատմանը ներկայացնել:

Հանձնաժողովի նախագահ՝ ____________ Միշա Եղիազարյան

Հանձնաժողովի անդամներ ՝ ____________ Արզամ Շառյան

____________ Վոլոդյա Հայրապետյան

____________ Աննա Սահրադյան

<u>**ԶԵԿՈՒՑԱԳԻՐ**</u>

---

25 փետրվարի 2020թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Հ" ԲԱԼԱՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Բալասյան

Ձեզ է ներկայացվում համայնքի սեփականություն համարվող բնակելի ֆոնդի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի 2020 թվականի փետրվարի 24-ի նիստի N03 արձանագրությունը:

Զեկուցող՝ Միշա Եղիազարյան

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԻՑ N 2-90/20/Ի-326/20
«25» 02 2020 թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի, Բյուրեղավան համայնք
Վազգեն Ա. Վեհափառի փողոց, հեռ. (222)65203 , էլ .փոստ byureghavan. kotayq @mta.gov.am

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

11 հունիսի 2014 թվականի № 78 - Ա

**ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ 49 ՇԵՆՔԻ N 54 ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՍՏԱՍԻԿ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20 -րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594 - 596 հոդվածներով, հիմք ընդունելով բնակիհանձնաժողովի առաջարկությունը և Ստասիկ Սարգսի Սիմոնյանի դիմումը՝ **ավագանին որոշում է.**

1. Բյուրեղավանի քաղաքային համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի 2-րդ փողոցի 49 շենքի 27.69 ք.մ ընդհանուր մակերեսով N 54 բնակարանը (նախկին II փողոց 1-ին հանրակացարան 60 սենյակ) անհատույց օտարել Ստասիկ Սարգսի Սիմոնյանի յոթ անձից բաղկացած ընտանիքին:

1) Ընդհանուր համատեղ սեփականատերեր համարել՝
Ստասիկ Սարգսի Սիմոնյանին՝ ծնված 1955 թվականի հունվարի 1 -ին,
Գոհար Վաչագանի Անտոնյանին՝ ծնված 1959 թվականի մայիսի 19-ին,
Արման Ստասիկի Սիմոնյանին՝ ծնված 1979 թվականի սեպտեմբերի 22 -ին,
Աննա Գառնիկի Մխիթարյանին՝ ծնված 1985 թվականի նոյեմբերի 14 -ին,
Գոհարիկ Արմանի Սիմոնյանին՝ ծնված 2004 թվականի օգոստոսի 6 -ին,
Ստաս Արմանի Սիմոնյանին՝ ծնված 2007 թվականի ապրիլի 13 -ին,
Միլենա Արմանի Սիմոնյանին՝ ծնված 2014 թվականի հունվարի 1 –ին:

2. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Ստասիկ Սարգսի Սիմոնյանի կողմից :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**Կողմ ( 7 )** **Դեմ ( 0 )** **Ձեռնպահ (0)**

ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ ____________
ԱՐԹԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ____________
ԱՐՄԱՆ ԽԱՆՋԱԴՅԱՆ ____________
ՎՈԼՈԴՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ____________
ՍԼԱՎԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ____________
ԱՐԳԱՄ ՇԱՌՅԱՆ ____________
ԹԱԳՈՒՀԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ ____________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԿԱՅԱԿԱՆ
## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «25» Հունիսի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

### 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Բյուրեղավան Բյուրեղավան ք. 2-րդ փողոց 49 շենք, 54 բնակարան

### 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական N 2715643 գր. 21.02.2011թ., Որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված շինության բաժանման հատակագիծ , Համայնքի ղեկավարի 15/06/2018թ. N 216-Ա որոշում, Որակավորման վկայական ունեցող անձի կողմից կազմված շինության հատակագիծ

### 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Բնակելի

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/հ | Կադաստրային ծածկագիրը | Տեսակը | Մակերեսի չափը | Գրանցված իրավունքի տեսակը |
|---|---|---|---|---|
| 1 | 07-003-0035-0025-001-054 | Բնակարան | 31.86 ք.մ. | ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

*Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ*

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Էդիտա Աբգարյան

զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի ռեգիստր

Կ.Տ.